



## ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2023 թվականի թիվ 100-Ա

ք. Երևան

#### «:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «:ԲՈՒՆ» գիտամշակութային հիմնադրամի՝ հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման ԵՀ N 336 լիցենզիան վերաձևակերպելու մասին 2023 թվականի նոյեմբերի 20-ի հայտը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «:ԲՈՒՆ» գիտամշակութային հիմնադրամի հայտը և գտնվելու վայրի փոփոխության հիմքով վերաձևակերպել 2022 թվականի հուլիսի 25-ին տրամադրված ԵՀ N 336 լիցենզիան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «:ԲՈՒՆ» գիտամշակութային հիմնադրամին ծանուցելուց մեկ օր հետո:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2023թ. նոյեմբերի 23  
ք. Երևան